

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂԻ ՕՐ-2015_1

ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի «Սպորտային ծրագրավորման» դպրոցի սաները պարապմունքների և մրցույթների մասնակցելուց բացի շատ են սիրում հորինել բազմաբնույթ խաղեր կապված թվերի հետ: Նրանց հորինած վերջին խաղի էությունը հետևյալն է.

- գրատախտակին գրվում է ոչ բացասական ամբողջ թիվ;
- այդ թվից հանվում է թվի գրության մեջ առկա որևէ թվանշան;
- նույն գործողությունը կատարվում է ստացված թվի հետ;
- նշված պրոցեսը շարունակվում է այնքան, մինչև որ հերթական թիվը չի հավասարվել 0-ի;
- հաղթող է համարվում այն մասնակիցը, որը ավելի քիչ հանման գործողություն կատարելով տրված թվից ստանում է 0:

Ձեր խնդիրն է գրել ծրագիր, որի արդյունքում տրված n թվի համար կստանաք հաղթող մասնակցի կողմից կատարվող գործողությունների քանակը:

Մուտքային տվյալներ.

Մուտքում տրված է n ամբողջ թիվը, որը չի գերազանցում 10^6 -ը:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակ.

N	stdin	stdout
1	24	5

Դիտողություն: Բերված օրինակի համար հաղթող մասնակիցը կատարում է հետևյալ քայլերը.

24 → 20 → 18 → 10 → 9 → 0